



ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ԳԻՏԵԼԻՔ

Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

<<ՎԱՍՀԵՐ>> ՄՊԸ-ի <<Տաթև դպրոց>> հիմնարկ

Հասցեն - ք. Երևան, Մեքաստիա 3/7

Հեռախոսահամարները - +(374) 74-80-40, 099-74-80-40

Էլեկտրոնային հասցեն - tatevschool@yahoo.com

Ինտերնետային կայքի հասցեն - www.tatevschool.am

Դասարանների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	5	4	4	
2-րդ դասարան	4	4	4	
3-րդ դասարան	4	4	4	
4-րդ դասարան	3	3	4	աճ
5-րդ դասարան	3	3	3	
6-րդ դասարան	3	2	3	աճ
7-րդ դասարան	2	2	2	
8-րդ դասարան	2	1	1	
9-րդ դասարան	1	2	1	նվազում
10-րդ դասարան	-	-	-	
11-րդ դասարան	-	-	-	
12-րդ դասարան	-	-	-	
Ընդամենը	27	25	26	աճ

Դասարանների թվաքանակը 2023-2024 ուստարում աճել է 4 %-ով, ինչը պայմանավորված է եղել դպրոցի կողմից կրթության պահանջմունքների բավարարման ցանկալի պայմանների ապահովումով:

Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սովորողների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	70	64	56	նվազում
2-րդ դասարան	59	63	56	նվազում
3-րդ դասարան	58	57	55	նվազում
4-րդ դասարան	42	49	53	աճ
5-րդ դասարան	32	40	41	աճ
6-րդ դասարան	37	26	40	աճ
7-րդ դասարան	20	27	26	նվազում
8-րդ դասարան	23	16	18	աճ
9-րդ դասարան	10	20	15	նվազում
10-րդ դասարան	-	-	-	
11-րդ դասարան	-	-	-	
12-րդ դասարան	-	-	-	
Ընդամենը	351	362	360	նվազում

Դպրոցի սովորողների թիվը 2023-2024 ուստարում նվազել է 0.5 %-ով, ինչը հիմնականում վերաբերելի է տարրական դասարաններին: 5-9-րդ դասարաններում սովորողների թվաքանակը 7%-ով ավելացել է:

Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	356	369	370	աճ
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	351	362	360	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	15	11	25	աճ
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	19	18	35	աճ

2023-2024 ուսումնական տարվա սկզբին սովորողների ընդհանուր թիվն աճել է, ուսումնական տարվա վերջին՝ նվազել: 2023-2024 ուստարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը 40 %-ով գերազանցել է ընդունված սովորողների թվին: Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը նախորդ տարվա հետ համեմատած աճել է 127 %-ով, իսկ ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը՝ 94 %-ով:

**Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ ընթացիկ և նախորդ 2
ուստարիների համար**

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	46	42	47	աճ
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	16 ժ.	16 ժ.	16 ժ.	

2023-2024 ուստարում ուսուցիչների ընդհանուր թիվն աճել է 12 %-ով: Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությանը մնացել է նույնը. կարծում ենք՝ նման ծանրաբեռնվածությունն ուսուցման արդյունավետության տեսանկյունից նորմալ է:

**Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ ընթացիկ և
նախորդ 2 ուստարիների համար**

Ուսուցիչների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	11	10	9	նվազում
31-40 տարեկան	11	8	10	աճ
41-50 տարեկան	16	14	16	աճ
51-55 տարեկան	1	2	5	աճ
56 տարեկան և ավելի	7	8	7	նվազում

2023-2024 ուստարում մինչև 30 տարեկան ուսուցիչների թիվը նվազել է 10 %-ով, 56 տարեկան և ավելի տարիք ունեցողների թիվը՝ 13 %-ով: 31-55 տարեկան ուսուցիչների թիվն աճել է 29 %-ով: Դպրոցում անհրաժեշտ աշխատանք է կատարվել սկսնակ ուսուցիչների մասնագիտական կարողությունների և դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ, կազմակերպվել են մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ:

Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Պետրոսյան Օֆելյա Լևիկի	17 տարի 9 ամիս	17 տարի 9 ամիս	Դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, ԲՀԳՄԱ-ի հայկական մասնաճյուղի պատվավոր պրոֆեսոր
Տնօրենի օգնական	Գմբիկյան Սիրվարդ Հարությունի	3 տարի 9 ամիս	11 տարի 8 ամիս	
Տնօրենի օգնական	Վարդանյան Մարինե Սիմոնի	9 ամիս	10 տարի 9 ամիս	
Տնօրենի օգնական	Մարտիրոսյան Արուս Արտուշի	7 ամիս	7 ամիս	
Հաշվապահ	Ադամյան Հակոբ Ստեփանի	17 տարի 9 ամիս	17 տարի 9 ամիս	
Հաշվապահ	Կարապետյան Արմեն Վահագնի	1 տարի 8 ամիս	1 տարի 8 ամիս	
Գործավար	Իսպիրյան Արփինե Համբարձումի	1 տարի 7 ամիս	1 տարի 7 ամիս	

Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

<<Տարթև>> դպրոցը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը.

- Դպրոցի տարածքը ցանկապատված է քարե պարսպով և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
- Դպրոցն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:
- Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենքին:

4. Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավոր հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում դպրոցի տարածքից:
5. Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:

<<Տաթև>> դպրոցում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ.

1. Դպրոցի շենքը վերջին անգամ հիմնանորոգվել է 2005 թ.: Յուրաքանչյուր տարի կատարվում է մասնակի վերանորոգում:
2. Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:
3. Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:
4. Դպրոցն ապահովված է կապով:
5. Դպրոցի տանիքը պատված է հրակայուն նյութերով:
6. Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:
7. Դպրոցի համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված:
8. Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները:
9. Դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն:
10. Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:
11. Դպրոցում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան:
12. Դպրոցի բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:
13. Դպրոցի տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

<<Տաթև>> դպրոցի նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ

<<Տաթև>> դպրոցը պահպանում է իր նախագծային հզորությունը.

1. Դպրոցում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և դպրոցի՝ լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:
2. Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:
3. Դպրոցի սովորողները <<Ֆիզկուլտուրա>> առարկայի ուսումնական դասընթացներն անցկացնում են մարզադահլիճում:

Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, II-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի միջև հեռավորությունները
Դասասենյակ N1	79.7	Շարքերով	14	70 սմ
Դասասենյակ N2	48	Շարքերով	17	70 սմ
Դասասենյակ N3	47.8	Շարքերով	16	70 սմ
Դասասենյակ N4	47.7	Շարքերով	15	70 սմ
Դասասենյակ N5	47.3	Շարքերով	15	70 սմ
Դասասենյակ N6	47.3	Շարքերով	15	70 սմ
Դասասենյակ N7	46.2	Շարքերով	14	70 սմ
Դասասենյակ N8	46	Շարքերով	14	70 սմ
Դասասենյակ N9	45.9	Շարքերով	14	70 սմ
Դասասենյակ N10	45.5	Շարքերով	14	60 սմ
Դասասենյակ N11	45.1	Շարքերով	13	60 սմ
Դասասենյակ N12	44.3	Շարքերով	18	60 սմ
Դասասենյակ N13	34.6	Շարքերով	13	50 սմ
Դասասենյակ N14	33.5	Շարքերով	13	50 սմ
Դասասենյակ N15	33	Շարքերով	11	50 սմ
Դասասենյակ N16	32.4	Շարքերով	10	50 սմ
Դասասենյակ N17	32.4	Շարքերով	15	50 սմ
Դասասենյակ N18	32.1	Շարքերով	15	50 սմ
Դասասենյակ N19	31.9	Շարքերով	14	50 սմ
Դասասենյակ N20	31.6	Շարքերով	14	50 սմ
Դասասենյակ N21	31.3	Շարքերով	13	50 սմ
Դասասենյակ N22	30.5	Շարքերով	13	50 սմ
Դասասենյակ N23	30.5	Շարքերով	12	50 սմ
Դասասենյակ N24	30.3	Շարքերով	13	50 սմ
Դասասենյակ N25	30.2	Շարքերով	13	60 սմ

Դասասենյակ N26	30.2	Շարքերով	12	50 սմ
----------------	------	----------	----	-------

Դասասենյակներում հիմնականում սեղան-նստարանները դասավորված են շարքերով (ըստ ձախակողմյան բնական լուսավորվածության), սակայն շատ հաճախ՝ դասի թեմայով (թեմատիկ կրկնություններ, ամփոփիչ դասեր,...) և զանազան մեթոդների կիրառմամբ (խմբային աշխատանք,...) պայմանավորված, դրանք վերադասավորվում են շրջանաձև, Ու-աձև, խառը: Դպրոցի սեղան-նստարանների հարմար ձևը և չափերը արագ և հեշտությամբ դրանք վերադասավորելու հնարավորություն են ընձեռում:

Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ)
Դասասենյակ N1	79.7	5.6	ավելի 2.6
Դասասենյակ N2	48	2.8	պակաս 0.2
Դասասենյակ N3	47.8	2.9	պակաս 0.1
Դասասենյակ N4	47.7	3.1	ավելի 0.1
Դասասենյակ N5	47.3	3.1	ավելի 0.1
Դասասենյակ N6	47.3	3.1	ավելի 0.1
Դասասենյակ N7	46.2	3.3	ավելի 0.3
Դասասենյակ N8	46	3.2	ավելի 0.2
Դասասենյակ N9	45.9	3.2	ավելի 0.2
Դասասենյակ N10	45.5	3.2	ավելի 0.2
Դասասենյակ N11	45.1	3.4	ավելի 0.4
Դասասենյակ N12	44.3	2.4	ավելի 0.4
Դասասենյակ N13	34.6	2.6	պակաս 0.4
Դասասենյակ N14	33.5	2.5	պակաս 0.5
Դասասենյակ N15	33	3	
Դասասենյակ N16	32.4	3.2	ավելի 0.2
Դասասենյակ N17	32.4	2.1	ավելի 0.1
Դասասենյակ N18	32.1	2.1	ավելի 0.1
Դասասենյակ N19	31.9	2.2	ավելի 0.2
Դասասենյակ N20	31.6	2.2	ավելի 0.2
Դասասենյակ N21	31.3	2.4	ավելի 0.4
Դասասենյակ N22	30.5	2.3	ավելի 0.3
Դասասենյակ N23	30.5	2.5	պակաս 0.5
Դասասենյակ N24	30.3	2.3	ավելի 0.3
Դասասենյակ N25	30.2	2.3	ավելի 0.3
Դասասենյակ N26	30.2	2.5	ավելի 0.5

1-4-րդ դասարաններում մեկ սովորողին ընկնող միջին մակերեսը 3.16 մ² է, որը նորմայից 0.16 մ²-ով ավելի է: 5-9-րդ դասարաններում մեկ սովորողին ընկնող միջին մակերեսը 2.28 մ² է, որը նորմայից 0.28 մ²-ով ավելի է:

**<<Տաթև>> դպրոցի անձնակազմի և սովորողների անվտանգ
կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ**

<<Տաթև>> դպրոցն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը.

1. Դպրոցի անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:
2. Դպրոցի անձնակազմը և սովորողները տեղեկացված են դպրոցում առկա անվտանգության միջոցների գտնվելու տեղերի վերաբերյալ ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին:
3. Դպրոցում իրականացվում են աղետների պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ:
4. Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով:
5. Ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
6. Դպրոցի միջանցքները ջեռուցվում են:
7. Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:
8. Դպրոցի 3-4-րդ հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար:
9. Դպրոցի բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օձառ, թուղթ և այլն):
10. Դպրոցում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին:
11. Դպրոցի սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ:
12. Դպրոցում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն:

Տվյալներ ուսումնական հաստատության շենքի ջեռուցման պայմանների մասին

Դիտարկման ամսաթիվ – 8.02.2024 թ.

Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով			
Այո		Ոչ – Շենքի 3-րդ հարկը ջեռուցվում է էլեկտրականությամբ:	
Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը (վառելիքի տեսակը)	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը
Դասասենյակ N1	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N2	գազ	19°	5:00-17:00

Դասասենյակ N3	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N4	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N5	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N6	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N7	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N8	Էլեկտրաէներգիա	20°	5:00-17:00
Դասասենյակ N9	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N10	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N11	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N12	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N13	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N14	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N15	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N16	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N17	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N18	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N19	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N20	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N21	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N22	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Դասասենյակ N23	գազ	18°	5:00-17:00
Դասասենյակ N24	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N25	գազ	19°	5:00-17:00
Դասասենյակ N26	գազ	19°	5:00-17:00
Մարզադահլիճ		16°	5:00-17:00
Միջոցառումների դահլիճ	Էլեկտրաէներգիա	17°	5:00-17:00
Ուսուցչանոց	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Տնօրենի առանձնասենյակ	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Հանգստի սենյակ	գազ	19°	5:00-17:00
Ձեռքի աշխատանքի սենյակ	գազ	17°	5:00-17:00
Լաբորատորիա	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
Համակարգչային սենյակ	Էլեկտրաէներգիա	19°	5:00-17:00
Արհեստանոց	Էլեկտրաէներգիա	17°	5:00-17:00
Գրադարան	Էլեկտրաէներգիա	17°	5:00-17:00
Բուժկետ	գազ	21°	5:00-17:00
Ճաշարան	Էլեկտրաէներգիա	18°	5:00-17:00
3-րդ հարկի սանհանգույց	Էլեկտրաէներգիա	17°	5:00-17:00
4-րդ հարկի սանհանգույց	գազ	18°	5:00-17:00
2-րդ հարկի միջանցքներ	գազ	17°	5:00-17:00
3-րդ հարկի միջանցքներ	Էլեկտրաէներգիա	17°	5:00-17:00

4-րդ հարկի միջանցքներ	գազ	17°	5:00-17:00
-----------------------	-----	-----	------------

Դպրոցը տեղակայված է շենքի 2-4-րդ հարկերում: 2-րդ և 4-րդ հարկերն ապահովված են լոկալ ջեռուցման համակարգով: Ջերմաստիճանը դպրոցում համապատասխանում է ջերմային ռեժիմի պահպանման պահանջներին: 3-րդ հարկի համար ևս նախատեսվում է ապահովել լոկալ ջեռուցման համակարգ:

Տվյալներ ուսումնական հաստատության ջրամատակարարման, սանհանգույցների (կոյուղացման) առկայության և դրանց վիճակի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվը - 8.02.2024 թ.

Հաստատության ջրամատակարարումը						
Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով		Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչ շուրջօրյա		Ապահովված չէ հոսող խմելու ջրով		
<u>Այո</u>		Օրական քանի՞ ժամ է ջրամատակարարումը				
Ոչ						
Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը						
Շենքի հարկը	Սանհանգույցների թիվը	Աղջիկների սանհանգույցի առկայությունը	Տղաների սանհանգույցի առկայությունը	Հիգիենայի պարագաների առկայությունը	Հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին	Վերանորոգված են, թե ոչ
3-րդ հարկ	2	Այո	Այո	Այո	Ոչ	Այո
4-րդ հարկ	2	Այո	Այո	Այո	Ոչ	Այո

Դպրոցում ջրամատակարարումը շուրջօրյա է, և բոլոր սանիտարահիգիենիկ պահանջները հետևողականորեն կատարվում են:

Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվը - 8.02.2024 թ.

Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ	
<u>Այո</u>	Ոչ

Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պատահաններ, թե ոչ					
Այո			Ոչ		
Նկարագրել սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության					
Սննդի կետի տեսակը	Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձանց թիվը և տարածքը (քմ)	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը	Տաք սննդի հնարավորությունը	Վերանորոգված է, թե ոչ
Ճաշարան	130 154 քմ	Այո	Այո	Այո	Այո

Ճաշարանը երեք հերթափոխով սպասարկում է դպրոցի բոլոր սովորողներին:

Տվյալներ ուսումնական հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվը - 8.02.2024 թ.

Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ					
Այո			Ոչ		
Ուսումնական հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն					
Այո					
Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ)	Բուժաշխատողների թիվը և նրանց պաշտոնները	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ	Սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
4-րդ հարկ 29.7 քմ	2-բժիշկ, բուժքույր	Գրասեղան - 2 հատ Աթոռ - 6 հատ Թախտ - 1 հատ Գրապահարան - 1 հատ Դեղատնային պահարան - 1 հատ Դույլ՝ ոտքով բացվող կափարիչով - 1 հատ Կշեռք - 1 հատ Հասակաչափի - 1 հատ Կարպետ - 1 հատ	Այո	Նորմալ	Առկա են

Բուժկետում առկա գույքն արդիականացման կարիք ունի:

Սոցիալական առողջության չափանիշներ

<<Տաթև>> դպրոցն իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ:

1. Դպրոցում իրականացվում են ծրագրեր ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու համար:
2. Դպրոցում իրականացվում են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ:
3. Դպրոցում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ:
4. Դպրոցն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ:
5. Դպրոցը ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպում միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:

Տվյալներ ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ

Հաստատությունում գրանցված ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը տվյալ ուստարում			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը, սովորող(ները)	Ձեռնարկված միջոցառումը
Ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները			
Ծրագիրը և միջոցառումը	Ամսաթիվը	Դասարանը	
1. Դասղեկի ժամ	4.10.2023 թ.	IX <<Փայլածու>>	
2. Դասղեկի ժամ	12.10.2023 թ.	VIII <<Սիփան>>	
3. Ջրույց. <<Վատ սովորություններ. ինչպես պայքարել դրանց դեմ>>	11.01.2024 թ.	VII <<Եփրատ>>	
4. Ջրույց. <<Վատ սովորություններ. ինչպես պայքարել դրանց դեմ>>	12.01.2024 թ.	VII <<Տիգրիս>>	
5. Դասղեկի ժամ	1.02.2024 թ.	VII <<Եփրատ>>	
6. Դասղեկի ժամ	9.02.2024 թ.	VII <<Տիգրիս>>	
7. Դասը վարում է ծնողը. <<Թմրամիջոցը և անչափահասը>>	17.04.2024 թ.	VIII <<Սիփան>> IX <<Փայլածու>>	
Հաստատությունում գրանցված մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերը, դրանց բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված քայլերը			

Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը	Բացահայտմանն ու կանխմանն ուղղված քայլերը
1. -----	-----	-----	-----
Հաստատությունում սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմները			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը, սովորող(ները)	Բացահայտման, քննարկման մեխանիզմը, ձեռնարկված քայլերը և կանխարգելման ուղիները
1. -----	-----	-----	-----
Ուսումնական հաստատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ և մեխանիզմներ			
Միջոցառում	Ամսաթիվը	Մասնակիցները, դրանց թիվը	Առաջադրված մեխանիզմ
1. Վեբինար. <<Խթանել անվտանգ ուսուցումը>>	8.09.2023թ.	Բուժաշխատողներ ուսուցիչներ, ծնողներ - 442	Իրազեկել դպրոցի անձնակազմին և ծնողներին օդակաթիլային վարակների կանխարգելման և վաղ հայտնաբերման, վերահսկման մեխանիզմների մասին:
2. <<Համակարգիչն ընկե՞ր, թե թշնամի>> թեմայով զրույց	12.01.2024 թ. 19.01.2024 թ.	IV դաս. սով. – 53 V դաս. սով. – 41 VI դաս. սով. – 40	Ծնողների մոտ հիմնավորել խնդրի կարևորությունը և նրանց հետ համագործակցությամբ սովորողների շրջանում հասնել ցանկալի արդյունքի:
2. Ֆիլմի դիտում և քննարկում. <<Օգտակար և վնասակար համակարգիչը>>	14.02.2024 թ. 16.02.2024 թ.	I դաս. սով. – 56	Ծնողների մոտ հիմնավորել խնդրի կարևորությունը և նրանց հետ համագործակցությամբ սովորողների շրջանում հասնել ցանկալի արդյունքի:
Հաստատությունում կազմակերպված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին			

սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվը	Դասարան(ները)	Մասնակիցների թիվը
1. Առողջ ապրելակերպ. ա) <<ՄԻԱՎ-ի կանխարգելումը>> բ) <<ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները>> (Առողջ ապրելակերպի ձեռնարկ)	24.01.2024 թ.	VIII	18
	26.01.2024 թ.	IX	16
Ուսումնական հաստատության ստեղծած ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպված միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվը	Դասարան(ները)	Մասնակիցների թիվը
<<Ո՛չ բռնությանը, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշմանը>>	19.10.2023 թ. 20.10.2023 թ.	V	38

Դպրոցում կատարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքները բազմազան են և ունեն խմբային ու անհատական բնույթ: Դրանք իրագործվում են տարբեր մեթոդների կիրառմամբ՝ և՛ դասապրոցեսի, և՛ դասղեկի ժամերի ու միջոցառումների ժամանակ: Միջանձնային փոխհարաբերությունների հանդեպ ցուցաբերած հետևողական ուշադրության արդյունքում ուսումնական միջավայրը հնարավորինս զերծ է մնացել մերժելի երևույթներից: Ընդհանուր առմամբ, սովորողների ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներն արդյունավետ են եղել և նպատակային:

Ուսումնական հաստատության գործունեության արդյունավետություն

Հաստատության սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշները

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ տվյալ ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ դասարան	9-րդ դասարան	4-րդ դասարան	9-րդ դասարան	4-րդ դասարան	9-րդ դասարան
Մայրենի	53	-----	8	-----	8	-----
Հայոց լեզու	-----	15	-----	7	-----	14
Գրականություն	-----	15	-----	8	-----	13
Ռուսաց լեզու	53	15	8	7	-----	11
Անգլերեն	53	15	8	8	-----	17
Մաթեմատիկա	53	-----	8	-----	7	13
Երաժշտություն	53	-----	8	-----	-----	-----
Կերպարվեստ	53	-----	9	-----	-----	-----
Ես և շրջակա աշխարհը	53	-----	8	-----	-----	-----
Հայաստանի աշխարհագրություն	-----	15	-----	8	-----	13
Հայոց պատմություն	-----	15	-----	8	-----	12
Համաշխարհային պատմություն	-----	15	-----	8	-----	-----
Հայոց եկեղեցու պատմություն	-----	15	-----	8	-----	-----
Հասարակագիտություն	-----	15	-----	8	-----	-----
Հանրահաշիվ	-----	15	-----	7	-----	-----
Երկրաչափություն	-----	15	-----	6	-----	-----
Ինֆորմատիկա	-----	15	-----	8	-----	-----
Ֆիզիկա	-----	15	-----	7	-----	15
Քիմիա	-----	15	-----	6	-----	14
Կենսաբանություն	-----	15	-----	8	-----	12
Տեխնոլոգիա	53	-----	9	-----	-----	-----
ՆԶՊ	-----	15	-----	8	-----	-----
Ֆիզկուլտուրա	53	15	9	9	-----	-----
Շախմատ	53	-----	9	-----	-----	-----
Ընդամենը	53	15	8	8	8	13

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ նախորդ ուստարում

Հիմնական	Սովորողների թիվը	Հիմնական	4-րդ դասարանում
----------	------------------	----------	-----------------

առարկաներ			առարկաներից տարեկան գնահատականների միջինը		գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ դասարան	9-րդ դասարան	4-րդ դասարան	9-րդ դասարան	4-րդ դասարան	9-րդ դասարան
Մայրենի	49	-----	8	-----	8	-----
Հայոց լեզու	-----	20	-----	8	-----	14
Գրականություն	-----	20	-----	8	-----	14
Ռուսաց լեզու	49	20	8	8	-----	15
Անգլերեն	49	20	7	8	-----	16
Մաթեմատիկա	49	-----	7	-----	7	14
Երաժշտություն	49	-----	8	-----	-----	-----
Կերպարվեստ	49	-----	9	-----	-----	-----
Ես և շրջակա աշխարհը	49	-----	8	-----	-----	-----
Հայաստանի աշխարհագրություն	-----	20	-----	9	-----	11
Հայոց պատմություն	-----	20	-----	9	-----	13
Համաշխարհային պատմություն	-----	20	-----	8	-----	-----
Հայոց եկեղեցու պատմություն	-----	20	-----	9	-----	-----
Հասարակագիտություն	-----	20	-----	9	-----	-----
Հանրահաշիվ	-----	20	-----	7	-----	-----
Երկրաչափություն	-----	20	-----	6	-----	-----
Ինֆորմատիկա	-----	20	-----	8	-----	-----
Ֆիզիկա	-----	20	-----	8	-----	17
Քիմիա	-----	20	-----	7	-----	-----
Կենսաբանություն	-----	20	-----	9	-----	15
Տեխնոլոգիա	49	-----	9	-----	-----	-----
ՆԶՊ	-----	20	-----	8	-----	-----
Ֆիզկուլտուրա	49	20	9	9	-----	8
Շախմատ	49	-----	8	-----	-----	-----
Ընդամենը	49	20	8	8	8	14

Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ

Քննական առարկաներ	Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների
-------------------	----------------------------------------------------------------------------------------------------------

	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը		Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը	
	4-րդ դասարան	9-րդ դասարան	4-րդ դասարան	9-րդ դասարան
Մայրենի	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-
Գրականություն	-	-	-	7 %
Օտար լեզու	-	-	-	10 %
Մաթեմատիկա	-	-	-	7 %
Հայոց պատմություն	-	-	-	8 %
Բնագիտություն	-	-	-	-
Ֆիզկուլտուրա	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-

2023-2024 ուստարում 4-րդ դասարաններում դասավանդվող առարկաներից տարեկան գնահատականների ընդհանուր միջին միավորը նախորդ ուստարվա համեմատ պահպանվել է: Պահպանվել է նաև 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման միավորների միջինը: <<Մայրենի>> և <<Մաթեմատիկա>> առարկաներից գիտելիքների ստուգման միավորների միջինը և՛ նախորդ, և՛ այս ուստարում համապատասխանել է նշված առարկաներից տարեկան գնահատականների միջինին:

2023-2024 ուստարում 9-րդ դասարանում դասավանդվող առարկաներից տարեկան գնահատականների ընդհանուր միջին միավորը ևս պահպանվել է: 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների միավորների միջինը 7 %-ով նվազել է, որը վերաբերելի է <<Գրականություն>>, <<Օտար լեզու>>, <<Մաթեմատիկա>>, <<Հայոց պատմություն>> առարկաներին:

Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ	2021-2022 ուստարի		2022-2023 ուստարի		2023-2024 ուստարի	
	1-4 դաս.	5-9 դաս.	1-4 դաս.	5-9 դաս.	1-4 դաս.	5-9 դաս.
Գերազանց	47	9	45	6	33	10

առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	30 %	7 %	27 %	5 %	31 %	7 %
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	22 10 %	65 53 %	28 17 %	81 62 %	14 13 %	76 54 %
Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	-	-	-	-	-	-
Կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	-	-	-	-	-	-
Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը	-	3 30 %	-	6 30 %	-	8 53 %
Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում	-	7 70 %	-	14 70 %	-	7 47 %
Սովորողների բացակայությունների թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների	4986	3319	3369	3783	8646	7795
Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	-	-	-	-	-	-
Ուսումնական տարվա ընթացքում տվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը	17 7 %	2 2 %	12 5 %	6 5 %	21 10 %	14 10 %

տոկոսը ըստ կրթական աստիճանների						
-ՀՀ այլ հաստատություններ տեղափոխվածների թիվը	11	2	10	5	17	13
-այլ երկրների ուսումնական հաստատություններ տեղափոխվածների թիվը	6	-	2	1	4	1
Ուսումնական տարվա ընթացքում ուսումնական ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվը ըստ կրթական աստիճանների, այդ թվում՝	-	-	-	-	-	-
-հիվանդության, անկարողության պատճառով	-	-	-	-	-	-
-ընտանիքի սոցիալական վիճակի պատճառով	-	-	-	-	-	-
-սովորել չցանկանալու պատճառով	-	-	-	-	-	-
-այլ պատճառներով	-	-	-	-	-	-

Նախորդ ուստարվա համեմատ նկատվում է գերազանց առաջադիմությամբ սովորողների տոկոսային աճ՝ 1-4-րդ դասարաններում 4 %, 5-9-րդ դասարաններում 2 %: Համապատասխանաբար 4 %-ով և 8 %-ով պակասել է ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը: Սովորողների առաջադիմության վերաբերյալ ցուցանիշներից ակնառու է, որ առաջադիմությունը բարելավվել է:

Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների քանակը տոկոսային հարաբերությամբ աճել է 23 %-ով:

Կտրուկ ավելացել է բացակայությունների և ուսումնական տարվա ընթացքում դպրոցից այլ հաստատություններ տեղափոխված սովորողների թիվը:

Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթների սովորողների վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հանրապետական առարկայական օլիմպիադաների	23 19 %	51 22 %	36 10 %

մասնակիցների թիվը և տոկոսը հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ			
Հանրապետական առարկայական օլիմպիադաներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	1 1 %	1 2 %	1 1 %
Միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	0 0 %	0 0 %	0 0 %
Միջազգային առարկայական օլիմպիադաներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	0 0 %	0 0 %	0 0 %
Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	32 9 %	73 20 %	85 24 %
Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	8 25 %	39 79 %	54 64 %

տոկոսը			
--------	--	--	--

Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը նախորդ ուստարվա համեմատ նվազել է 12 %-ով: Գրանցվել է մարզական և մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության թվաքանակի 4 % աճ:

**Հաստատության ուսուցիչներին և նրանց գործունեությանը վերաբերող
ցուցանիշներ**

Տվյալներ ուսուցչական անձնակազմի և նրանց գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	36 78 %	36 86 %	42 89 %
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը	38 83 %	37 88 %	44 93 %
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	2 4 %	2 5 %	2 4 %
Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը	-	-	-
Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը	3 7 %	32 76 %	34 72 %
Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը	-	1	1
Ուսուցիչների միջին տարիքը	41	43	43
Միջազգային ու	-	-	-

հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը			
Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը	46 100 %	42 100 %	47 100 %
Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը	46 100 %	42 100 %	47 100 %
Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը	34	39	45
Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվը (օր)	42	13	33
Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը	52	52	54
Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը	1608	1377	1173
Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս	6	14	17

անցկացվող գործնական պարապմունքների թիվը			
--------------------------------------------	--	--	--

Տարեցտարի ավելանում է բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող և ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը: Նախորդ ուստարվա համեմատ բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների քանակն ավելացել է 3 %-ով, իսկ ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը՝ 5 %-ով:

Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվն աճել է:

Ուստարվա ընթացքում դպրոցում անցկացված ցուցադրական, բաց դասերի թիվը և դպրոցից դուրս անցկացված գործնական պարապմունքների թիվն ավելացել են:

Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը 14 %-ով նվազել է:

Դպրոցի բոլոր ուսուցիչները տիրապետում են դասավանդման աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին, կազմակերպում են ցուցադրական, բաց դասեր, կատարում են փոխադարձ դասալսումներ: Ուսուցիչների մեծ մասը կիրառում է ժամանակակից մեթոդներ և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ: Չնայած վերոնշյալին՝ լուրջ աշխատանք կա դպրոցի մանկավարժական կազմը տարակարգ ունեցող ուսուցիչներով համալրելու, ուսուցիչների վերապատրաստումների և ուսումնամեթոդական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:

Հաստատության ուսումնական միջավայրին և ծառայություններին վերաբերող ցուցանիշներ/չափանիշներ

<<Տաթև>> դպրոցում ստեղծված է որակյալ կրթական միջավայր.

1. <<Տաթև>> դպրոցն ունի գործող գրադարան, որը հազեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: Գրադարանից կանոնավոր օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը:

2. <<Տաթև>> դպրոցն ունի ուսումնական լաբորատորիաներ և կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, համակարգչային և այլն, ինչպես նաև արհեստանոցներ, մարզադահլիճ, միջոցառումների անցկացման դահլիճ և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ (սենյակներ), որոնք հազեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով և ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով:

Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին

Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը քմ-ով	17.7
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում.	3394
-գեղարվեստական գրքերի թիվը	1236
-տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն)	45
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	1680
-ամսագրերի թիվը	433
-այլ	-
Վերջին անգամ գրադարանային ֆոնդի՝ նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը	2024
Գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը	105
Պատասխանել այո կամ ոչ	
Վերանորոգված է արդյոք գրադարանը	այո
Անցկացվում են գրադարանում դասեր և ուսումնական պարապմունքներ	ոչ
Գրադարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուրսներ, որքա՞ն	այո, 142
Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն և ազատ մոտենալ գրադարանի գրադարակներին և պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ	այո

Գրադարանը տեխնիկական վերազինման կարիք ունի:

Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	Տարածքը (քմ)	Վերանորոգման կարիքը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները (թվարկել հիմնականը և	Ուսումնանյութական, ուսումնադիդակտիկ նյութերը	Լրացուցիչ գույքի, սարքավորումների, պարագաների, նյութերի կարիքը

			նշել քանակները)		
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	47.3	-	Ամրակալան - 2 Բեռների հավաք. - 3 Լաբորատոր լծակ -1 Կամերտոն - 1 Սողնակավոր ռեոստատ - 2 Էլեկտրացույց - 1 Հայելիներ - 6 Ամպերաչափ - 4	Ուսումնական պաստառներ - 1 լր. Ֆիզիկոսների դիմանկարներ - 1 լր. Էլեկտրոնային ուսումն. նյութեր - 1 հավ.	Ուժեղարար - 1 Հավասար ծավալներով մարմինների հավաքածու - 2 Հաղորդալարերի փաթույթ (սիկելե կամ կոնստանտանե)- 2
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	47.3	-	Լաբորատոր կալան /շտատիվ, օղեր, սեղմակ, բռնիչ/ - 1լր. Չափար - 9 Սպիրտայրոց - 3 Տիգել - 7 Խողովակ - 4 Փորձանոթ - 124 Բնդիկատորային թղթեր - 7	Ուսումնական պաստառներ - 1 լր. Քիմիկոսների դիմանկարներ - 1 լր. Մենդելևի պարբերական համակարգ - 2 հատ Էլեկտրոնային ուսումն. նյութեր - 1 հավ.	Ջրի թորման սարք - 1 Սառնարաններ՝ ուղիղ և հակադարձ - 1 Կիպպի ապարատ - 1 Աերոմետրերի հավաքածու - 1 Մետաղների ստանդարտ պոտենցիալների շարք - 1
Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ	47.3	-	Թաց պատրաստուկներ, Հավաքածուներ, Հերբարիումներ, Մոդելներ, Մույլաժներ,	Ցուցապաստառներ- 3 լր. Էլեկտրոնային ուսումն. նյութեր - 1 հավ.	«Հողվածոտանիների տարբեր դասերի ներկայացուցիչների հավաքածու» - 1 «Մարդու ծագումը» հնէաբանական գտածոների մոդել - 1 «Քրոմոսոմների տրամախաչումը» մոդել-ապլիկացիա - 1
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	32.5	-	Համակարգչային բլոկ - 15 Մոնիտոր- 15 Ստեղնաշար- 15 Տպիչ - 1 Սկաներ- 1	Էլեկտրոնային ուսումն. նյութեր - 1 հավ.	Ցուցապաստառներ, Մոդելներ, Մակետներ
Արհեստանոց (փայտամշակման)	34.6	-	Մանեկի դարձակ - 1 Փականագործական գործիքների հավաքածու - 1 լր. Ատաղձագործական գործիքների հավաքածու - 1 լր. Խարավորագրման հավաքածու - 2 լր.	Ցուցապաստառներ	Հորիզոնական ֆրեզերային հաստոց-1 Էլեկտրական սրահաստոց - 1 Կիսաֆուզան - 3 Դպրոցական մեխանիկական կոնստրուկտոր - 2 լր.
Ձեռքի աշխատանքի սենյակ	48.5	-	Ունիվերսալ մեքենա- 2 Տարբեր տեսակի գործվածքների հավաքածուներ - 3 Քանոններ - 5 Ձեռքի մկրատներ- 4	Ցուցապաստառներ	Մանեկեն - 1
Միջոցառումների դահլիճ	77.6	-	Դաշնամուր - 1 Երաժշտական կենտրոն - 2 Ուժեղարար (բարձրա- խոսներով) - 1	-	-

			Պրոյեկտոր - 1 Էկրան - 1		
Մարզադահլիճ	263.2	-	Մարմնամարզական գործիքներ, Մարզախաղերի պարագաներ, Աթլետիկական պարագաներ, Ուժային պատրաստության համար մարզասարքեր	Ցուցապաստառներ	Ցատկափոս - 1 Թենիսի սեղան - 2 Էսպանդերներ գսպանակով - 4

Դպրոցի Ֆիզիկայի լաբորատորիան, Համակարգչային կարիները, Ձեռքի աշխատանքի սենյակը, Միջոցառումների դահլիճը, Մարզադահլիճը բավարար չափով հագեցած են: Քիմիայի, Կենսաբանության լաբորատորիաները և փայտամշակման արհեստանոցը մասնակի համալրման կարիք ունեն:

Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության ցուցանիշներ

<<Տաթև>> դպրոցի մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները տնօրինվում են արդյունավետ, և դպրոցը կարողանում է ներգրավել լրացուցիչ միջոցներ:

Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշներ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորող/ուսուցիչ հարաբերությունը	8	9	8	նվազում
Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերությունը	9	9	10	աճ
Դասարանների միջին խտությունը	13	14	14	
Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը	86400	89800	93700	աճ
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	66100	66565	69856	աճ
Ուսուցիչների միջին աշխատավարձը	107579	108612	149984	աճ
Վարչական աշխատողների միջին աշխատավարձը	152833	169822	182092	աճ

Տվյալներ հաստատության բյուջետային միջոցների վերաբերյալ

	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը	25 %	19 %	18 %
Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	88 %	84 %	87 %
Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը	13 %	8 %	6 %
Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը	58 %	59 %	58 %
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը	7 %	7 %	7 %
Նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռք բերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը	5 %	3 %	5 %

2023-2024 ուստարում դասարանների միջին խտությունը պահպանվել է: Դպրոցի աշխատակազմի աշխատավարձը 16.5 %-ով բարձրացել է: Ծնողների դրամական ներդրումներն ավելացել են, հովանավորչական միջոցների չափը՝ նվազել: Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը պահպանվել է:

Ուսումնական հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովում

- <<Տաթև>> դպրոց ընդունվելու և դպրոցում սովորելու համար ստեղծված են հավասար պայմաններ բոլոր երեխաների առումով՝ նրանց կարիքներից, կարողություններից անկախ:
- Դպրոցն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցություն ուսումնառության գործընթացին՝ նրանց կարիքներից, կարողություններից անկախ:
- Դպրոցն ապահովում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը՝ նրանց կարիքներից, կարողություններից անկախ:

- Դպրոցն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:

Տվյալներ հաստատությունում հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Սեռերի հավասարության գործակիցը	0.9	0.7	0.95
Գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող տղաների թվի հարաբերությունը գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող աղջիկների թվին	0.9	0.5	0.7
Տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին	1	-	-
Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (Ժամերով)	1	1	0.9
Մաթեմատիկա, Ֆիզիկա, Քիմիա և Կենսաբանություն առարկաներից տղաների և աղջիկների տարեկան միջին առաջադիմությունը	Մաթ. տղա – 7 աղջիկ – 8 Ֆիզիկա տղա - 6 աղջիկ - 7 Քիմիա տղա - 6 աղջիկ – 7 Կենսաբ. տղա - 8 աղջիկ - 9	Մաթ. տղա – 7 աղջիկ - 7 Ֆիզիկա տղա - 7 աղջիկ - 7 Քիմիա տղա - 6 աղջիկ – 7 Կենսաբ. տղա - 8 աղջիկ - 8	Մաթ. տղա – 7 աղջիկ - 7 Ֆիզիկա տղա - 7 աղջիկ - 8 Քիմիա տղա - 6 աղջիկ – 7 Կենսաբ. տղա - 7 աղջիկ - 8
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և սոկոսը	-	-	-
Անվճար դասագրքեր ստացող սովորողների	351 100 %	362 100 %	360 100 %

Թիվը և տոկոսը			
Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը	351 100 %	362 100 %	360 100 %

Դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալապես անապահով սովորողներ չկան: Այդուամենայնիվ, մեզ համար ընդունելի է ներառական կրթության գաղափարախոսությունը, որի նկատմամբ ուսուցիչներն ունեն դրական դիրքորոշում:

Նախորդ տարվա համեմատ սեռերի հավասարության գործակիցն աճել է. 2023-2024 ուստարում դպրոցում սովորել է 176 տղա, 184 աղջիկ: Դրական տեղաշարժ է նկատվում նաև գերազանց առաջադիմություն ունեցող տղաների թվի առումով (50-ից՝ 20 տղա, 30 աղջիկ): Տղաների բացակայությունները (7842 ժամ) աղջիկների բացակայություններից (8599 ժամ) 757 ժամով քիչ են:

Համայնքային մասնակցություն

- Նախորդ ուսումնական տարում դպրոցի սովորողների տարիքը չի գերազանցել 16-ը: Դրանով պայմանավորված էլ սովորողների առաջարկություններն ու նախաձեռնությունները սակավադեպ են եղել: Բոլոր սովորողները պատրաստակամ են և սիրով մասնակցում են դպրոցում իրականացվող ծրագրերին ու միջոցառումներին: Տնօրինությունը դրական դիրքորոշում ունի աշակերտական ինքնավարության նկատմամբ, խթանում է սովորողների հետազոտական, ստեղծագործական ունակությունները, անհատական հետաքրքրությունները, պատրաստ է ազդակել նախաձեռնություններին և օժանդակել դրանց իրագործմանը: Դպրոցի ազատ, անկաշկանդ ուսումնական միջավայրը սովորողներին ինքնադրսևորման լայն հնարավորություններ է ընձեռում:

- Դպրոցում ձևավորվել է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ: Յուրաքանչյուր սովորողի անձի և իրավունքի նկատմամբ ուսուցիչների կողմից ցուցաբերվում է անհատական մոտեցում ու հարգալից վերաբերմունք: Սովորող-սովորող հարաբերությունները խարսխված են հարգանքի և փոխօգնության վրա:
- Դպրոցի գործունեությունը հիմնվում է հանրամատչելիության և թափանցիկության վրա: Դպրոցի կայքի միջոցով ծնողները լիարժեք տեղեկացված են դպրոցի առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից: Մերտ է դաստեղծ-ծնող կապը, կազմակերպվում են ծնող-ուսուցիչ, ծնող-տնօրեն հանդիպումներ և տարաբնույթ քննարկումներ: Ըստ անհրաժեշտության ծնողներին տրվում է մանկավարժական և հոգեբանական խորհրդատվություն, կատարվում են համագործակցային աշխատանքներ՝ ի նպաստ դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովման:
- Ծնողները ներգրավված են սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին: Դպրոցում հաճախադեպ են նպատակային էքսկուրսիաները, մրցույթները և այլ միջոցառումները, որոնք կազմակերպվում և իրագործվում են ծնողների հետ արդյունավետ համագործակցության շրջանակներում:
- Բոլոր ծնողներն օգտվում են դպրոցի կայքից և էլեկտրոնային մատյանից: Ծնողների մեծ մասն օգտվում է նաև կրթական այլ կայքերից և այդպիսով տեղյակ է կրթական ոլորտի նորություններին:

Ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների (ՀԿ) հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության և ՀԿ-ների համատեղ իրականացված կրթական բոլոր ծրագրերը	Ծրագրի տևողությունը	ՀԿ-ի անվանումը	Մասնակից սովորողների թիվը
1. «Սնծովյան ավազանում շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված համատեղ ջանքեր»	21.05.2021 թ.	<<Ուրբան>> կայուն զարգացման հիմնադրամ	50
2. Շախմատի օլիմպիադա ասոցիացիայի անդամ դպրոցների սովորողների միջև	14.05.2022 թ.	«Մեկ ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիա	12
3. Ֆուտբոլի առաջնություն ասոցիացիայի անդամ դպրոցների սովորողների միջև	25.10.2022 թ.	«Մեկ ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիա	10
4. Բասկետբոլի առաջնություն	17.12.2022 թ.	«Մեկ ձայն» անկախ դպրոցների	7

ասոցիացիայի անդամ դպրոցների սովորողների միջև		հայկական ասոցիացիա	
----------------------------------------------------	--	-----------------------	--

**Հաստատության հիմնախնդիրները, դրանց
հաղթահարման ուղիները**

Ուժեղ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր.</p> <p><i>Վարչական մասում</i></p> <ul style="list-style-type: none">• Վարչական հմտություններ,• համագործակցային աշխատանք,• բարձր պատասխանատվություն,• նորարարական հմտություններ,	<p>1. Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր.</p> <p><i>Վարչական մասում</i></p> <p>Տնօրենի տեղակալների բացակայություն:</p>

- կրթական անկաշկանդ միջավայրի ապահովում:

Ուսումնաօժանդակ մասում

- Պարտաճանաչություն,
- պատասխանատվություն,
- մարդասիրական զգացումներ:

Ուսուցչական կազմում

- Մասնագիտական բարձր որակ,
- մանկավարժական հմտություններ,
- կրթական նոր միջավայրում արդյունավետ գործելու հմտություն:

2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր

- Գիտելիքների ձեռքբերման ձգտում,
- ակտիվ մասնակցություն մշակութային գործընթացին, զանազան մրցույթներին,
- հարգալից վերաբերմունք դպրոցի աշխատակազմի նկատմամբ:

3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր

- Ծնողների միջև համագործակցություն ու փոխըմբռնում,
- դպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցություն:

4. Ռեսուրսներով ապահովվածությունը

- Որակյալ մանկավարժներ,
- բավարար նյութատեխնիկական բազա:

5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները

Ուսումնաօժանդակ մասում

Ուսուցչի օգնականների քիչ քանակ:

Ուսուցչական կազմում

- Տարակարգ և գիտական կոչում ունեցող ուսուցիչների քիչ քանակ,
- վերապատրաստում անցած ուսուցիչների ոչ բավարար թվաքանակ,
- ուսումնամեթոդական ձեռնարկների և ուսումնական նյութերի ստեղծման առումով պասիվություն:

2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմեր

Ուսումնական միջավայրի և գույքի նկատմամբ ոչ սրտացավ վերաբերմունք:

3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր

Որոշ ծնողների կողմից երեխաների կրթության, դպրոցի հանդեպ անտարբեր վերաբերմունք:

4. Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները

- Ուսումնական և ուսումնաօժանդակ տարածքների պակաս,
- առարկայական կաբինետների պակաս,
- ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների պակաս,
- գրադարանի տեխնիկական թերի հագեցվածություն,
- անվտանգության համակարգերի պակաս:

5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը

- Համագործակցություն այլ կազմակերպությունների հետ,
- նորագույն մոտեցումների

6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը

- Դաստիարակչական աշխատանքներում անհատական մոտեցում,
- ծնողների հետ սերտ կապ,
- համագործակցություն այլ կրթօջախների հետ:

7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները

Դպրոցի ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում:

Հնարավորություններ

- Ուսման որակի բարձրացում,
- հովանավորների փնտրտուք,
- այլ կրթօջախների հետ կապերի ընդլայնում:

կիրառելիության անհամապատասխանություն եղած ֆինանսների հետ,
• ուսուցչական կազմի, ծնողների պասիվություն:

6. Հաղորդակցության, համագործակցության թույլ կողմերը

- Որակյալ մասնագետների պակաս,
- որոշ ծնողների՝ կրթական գործընթացի վերաբերյալ թյուր պատկերացումներ,
- լայն առումով հաղորդակցման համար ֆինանսների սղություն:

7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարությունները և խնդիրները

- Դպրոցի բյուջեի և ֆինանսական այլ աղբյուրների սահմանափակ լինելը,
- պետական ֆինանսավորման բացակայություն:

Վտանգներ

- Երկրում տնտեսական ու սոցիալական վիճակի վատթարացման հետևանքները դպրոցի վրա,
- պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսուցիչների հանդեպ ՀՀ կառավարության կողմից տարբերակված քաղաքականության վարում, որի արդյունքում տեղի է ունենում մանկավարժական կադրերի արտահոսք դեպի պետական ուսումնական հաստատություն: